Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման ծրագիր



Ծրագրի նկարագիրը	Ծրագրի նպատակն է Արաբկիր վարչական շրջանի Կոմիտասի թիվ 15, 15/5 հասցեում կառուցել բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր: Շենքի՝ հասարակական նշանակության առաջին երկու հարկերն ունեն շենքի ընդհանուր ծավալից առաջ եկած բացօթյա սյունաշարային անցուղի՝ տարածքների մուտքեր կազմակերպելու համար: Բնակարանների ընդհանուր թիվը կկազմի շուրջ 200: Տանիքն օգտագործվող է, կանաչապատ, կարելի է կազմակերպել ինչպես բացօթյա, այնպես էլ ծածկած սրճարան-ռեստորան: Մեքենաների կայանատեղի կազմակերպելու համար նախատեսված է նկուղային 2 հարկ՝ 100 ավտոմեքենայի համար:
Տեխնիկական ցուցանիշներ	Տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է՝ 3852.4 քմ, շինարարական մակերեսը՝ 36000քմ, կանաչապատումը՝ մոտ 20%:
Ծրագրի ժամկետներ	Շինարարական աշխատանքների ավարտը նախատեսվում է 2018թ-ին:
Ծրագրի արժեքը	Շուրջ 12 մլն ԱՄՆ դոլար:
Ներդրումների ձևը և հիմնական պայմանները	Ծրագիրն իրականացվում է մասնավոր ներդրողի կողմից, կառուցապատող՝ «Կաէռ քընսթրաքշն» ՍՊԸ:
Ներկա իրավիճակ	Համալիրի երկաթբետոնե հիմնակմախքի կառուցման աշխատանքները մոտենում են ավարտին: